ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«19» հոկտեմբեր 2022թ.
No 1/18-4/S1354/2022

«ԴԸ ԲԵՍԹ ՓԱՐԹՆԵՐ» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ
Ք. ՎԵԴԻ, 0601 ԹՈՒՄԱՆՅԱՆ 6, 1,
ԷԼ. ՀԱՍՑԵ gnumner2020@mail.ru
ՀԵՌ. 094 337 533

Հարգելի պարոն Վարդանյան,

Համաձայն ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Դը Բեսթ Փարթներ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև ՀՀ ՊԵԿ կարիքների համար տնտեսական ապրանքների ձեռքբերման համար 2022 թվականի հունվարի 14-ին կնքված թիվ ՀՀ-ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/95-Ք-2 ծածկագրով «Պետության կարիքների համար տնտեսական ապրանքների մատուցման» պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագրի) 1.1 կետով սահմանված կարգով՝ «Դը Բեսթ Փարթներ» ՍՊԸ-ն պարտավոր էր կատարեր ստանձնած պարտավորությունները: Կատարողը պարտավորվել էր մինչև սույն թվականի ապրիլի 17-ը մատակարարել համապատասխան ապրանքը (էլեկտական երկարացման լար 30 մետր), սակայն մինչ օրս ապարանքատեսակը չի մատակարարվել, որը խոչընդոտում է Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի բնականոն գործընթացին:

Տեղեկացնում եմ, որ Ձեր կազմակերպության կողմից խախտվել են Պայմանագրի էական պայմանները: Հետևաբար, Պայամանգրի 2.1.1 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն ստիպված է միակողմանի լուծել Պայմանագիրը:

Հիմք ընդունելով՝ Պայմանագրի 2.1.1 ենթակետի պահանջները՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 2022 թվականի հուլիսի 20-ից միակողմանի լուծում է 2022 թվականի հունվարի 14-ին կնքված ՀՀ-ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/95-Ք-2 ծածկագրով պայմանագիրը չկատարվածի ՝ 16 080 (տասնվեց հազար ութսուն) ՀՀ դրամի չափով:

Տեղեկացնում ենք, որ «Դը Բեսթ Փարթներ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 522.6 ՀՀ դրամ, որպես տույժ՝ Պայմանագրի 6.2 կետի համաձայն:

Միաժամանակ հայտնում ենք, որ Ընկերությունից կգանձվի նաև որակավորման ապահովման և պայմանագրի կատարման ապահովման գումարները համապատասխանաբար 2500 (երկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամի չափով և 1608 (մեկ հազար վեց հարյուր ութ) ՀՀ դրամի չափով:

7/19/2022

X

ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Signed by: GEVORGYAN EDGAR 4010690054 ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Կատ.՝ Ազնիվ Քոթանջյան
ՀՀ ՊԵԿ ԳԿՎԱՎ
Գնումների համակարգման բաժին
Հեռ.՝ 060-844-703